**Արձանագրություն N 2**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար ծրարների ծեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«03» մարտի 2016թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Մարինե Մովսիսյան** ՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄհԾ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Աղավնի Բուդոյանը՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1. «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-02» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի մարտի 03-ին, ժամը 11:00-ին:

**2.Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.**

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված.

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Ծրար | 8,298,024 |
| 2 | Ծրար, մեծ A4 ձևաչափի | 1,819,500 |
| 3 | Նամակի ծրար, A5 ձևաչափի | 2,948,265 |

2.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը |
|---|---|---|
| 1 | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 110, Հեռ. (010)558483 |
| 2 | «ՍԱՔԻ» ՍՊԸ | ք. Գորիս, Անկախության 2/31, Հեռ. (091)431563 |
| 3 | «ԱՆԿՅՈՒՆ» ՍՊԸ | ք. Վանաձոր, Մոսկովյան 56/6, Հեռ. (098) 111009 |

2.3 Համակարգում 23.02.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

**3.1 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

3.1.1 «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ -ի, «ՍԱՔԻ» ՍՊԸ -ի և «ԱՆԿՅՈՒՆ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3.2 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտերի /հայտերում առկա փաստաթղթերի/՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

3.2.1 «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ Հավելված 4.1-ի, որտեղ նշված չեն չափաբաժինների համարները:

3.2.2 «ՍԱՔԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ՝ Հավելված 1-ի, որտեղ հստակ նշված չէ ապրանքներն արտադրող երկրի անվանումը,

3.2.3 «ԱՆԿՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում ներառված փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ՝

ա/ Հավելված 1-ի, որտեղ 3-րդ կետում նշված չեն չափաբաժինների համարները և ապրանքներն արտադրող երկրի անվանումը:
բ/ Հավելված 3.1-ի, որի բովանդակությունը չի համապատասխանում հրավերի պահանջներին:
գ/ Հավելված 3.4-ի, որի բովանդակությունը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4.Հանձնաժողովը որոշեց.**

Հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. մարտի 09-ին ժամը՝ 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5.Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝

Անդամներ՝ Կարեն Համբարձումյան

Կարեն Մելքոնյան

Անահիտ Ավագյան

Մարինե Մովսիսյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան